

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ  
հիսունվեցերորդ նստաշրջան WHA56.1**

**Օրակարգի 13-րդ կետ, 21 մայիսի 2003 թ.**

**ԱՀԿ Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիա**

Առողջապահության համաշխարհային վեհաժողովի հիսունվեցերորդ նստաշրջանը՝

հիշեցնելով WHA49.17 և WHA52.18 բանաձևերը, որոնցում, ըստ ԱՀԿ Կանոնադրության 19-րդ Հոդվածի, առաջարկվում է մշակել ԱՀԿ ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիա (այսուհետև Կոնվենցիա),

ներկա և ապագա սերունդներին ծխախոտի օգտագործումից և ծխախոտի ծխի ազդեցությունից պաշտպանելու վճռականությամբ,

խորը մտահոգությամբ նշելով ծխելու և ծխախոտի օգտագործման այլ ձևերի ծավալների ընդլայնումը,

երախտագիտությամբ հիշատակելով Միջկառավարական բանակցային մարմնի աշխատանքների արդյունքների վերաբերյալ Միջկառավարական բանակցային մարմնի Նախագահի զեկույցը<sup>1</sup>,

համոզված լինելով, որ սույն Կոնվենցիան ազգային, տարածաշրջանային և միջազգային գործողությունների և գորբալ համագործակցության առաջխաղացման շրջադարձային քայլ է ծխախոտի օգտագործման վնասակար ազդեցությունից և ծխախոտի ծխի ներգործությունից մարդկանց առողջության պահպանման ուղղությամբ, գիտակցելով զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների նկատմամբ առանձնահատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը,

ընդգծելով Կոնվենցիայի հնարավորինս շուտ ուժի մեջ մտնելու և արդյունավետ գործադրման անհրաժեշտությունը՝

1. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է սույն բանաձևին կից Կոնվենցիան,
2. ՆՇՈՒՄ Է, որ ըստ Կոնվենցիայի 34-րդ Հոդվածի, այն պետք է բաց լինի ստորագրման համար 2003 թվականի հունիսի 16-23-ը՝ Ժնևի ԱՀԿ գլխավոր գրասենյակում, իսկ այսուհետև՝ 2003 թվականի հունիսի 30-ից 2004 թվականի հունիսի 29-ը՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր գրասենյակում, Նյու-Յորքում,
3. ԿՈՉ Է ԱՆՈՒՄ բոլոր պետություններին և դրա համար լիազորված տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպություններին քննարկել Կոնվենցիայի շուտափույթ ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման, հավանություն

<sup>1</sup> Փաստաթուղթ A 56/INF./DOC./7

տալու, պաշտոնապես հաստատման կամ դրան միանալու հարցը՝ այն հնարավորինս շուտ ուժի մեջ մտցնելու նպատակով,

4. ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՐԵՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ բոլոր պետություններին և լիազորված տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպություններին մինչ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը ձեռնարկել ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ներգործության նվազեցմանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները,
5. ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՐԵՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ բոլոր անդամ պետություններին, տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություններին, դիտորդներին և այլ շահագրգիռ կողմերի օժանդակել սույն բանաձևում հիշատակված նախապատրաստական գործունեությանը և արդյունավետ աջակցել Կոնվենցիայի շուտավույթ ուժի մեջ մտնելուն և գործադրմանը,
6. ԿՈՉ Է անում Միավորված ազգերի կազմակերպությանը և առաջարկում է այլ համապատասխան միջազգային կազմակերպություններին շարունակել աջակցել ծխախոտի դեմ պայքարի ազգային և միազգային ծրագրերին,
7. ՈՐՈՇՈՒՄ Է, ըստ Առողջապահության վեհաժողովի ընթացակարգի կանոնադրության 42-րդ Հոդվածի, հիմնել բացկազմ միջկառավարական աշխատանքային խումբ, որը, բաց լինելով բոլոր պետությունների և Կոնվենցիայի 34-րդ Հոդվածում նշված տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների համար՝ կքննարկի և առաջարկություններ կնախապատրաստի Կոնվենցիայում քննարկման և ընդունման ենթակա հարցերի վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում Կողմերի Համաժողովի առաջին նստաշրջանում,

Այդ հարցերը պետք է ներառեն հետևյալը.

- (1) Կողմերի Համաժողովի ընթացակարգի կանոնները (Հոդված 23.3), այդ թվում դիտորդների Կողմերի Համաժողովների նիստերին մասնակցության չափորոշիչները (Հոդված 23.6),
  - (2) մշտական քարտուղարության նշանակման և նրա գործառույթների կարգավորման տարբերակները (Հոդված 24.1),
  - (3) Կողմերի Համաժողովի և դրա օժանդակող մարմինների ֆինանսական կանոնները, և քարտուղարության գործառույթները կարգավորող ֆինանսական դրույթները (Հոդված 23.4),
  - (4) առաջին ֆինանսական ժամանակաշրջանի բյուջեի նախագիծը (Հոդված 23.4),
  - (5) առկա ու հնարավոր աղբյուրների և ըստ Կոնվենցիայի՝ իրենց ստանձնած պարտավորությունները կատարելու, Կողմերին օգնություն ցուցաբերելու մեխանիզմների քննարկումը (Հոդված 26.5),
8. ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է, որ բացկազմ միջկառավարական աշխատանքային խմբին հանձնարարել վերահսկել Կողմերի

Համաժողովի առաջին նստաշրջանի նախապատրաստումը և անմիջապես նրան զեկույց ներկայացնել,

9. ՈՐՈՇՈՒՄ Է, որ հասարակական կազմակերպությունների մասնակցությանը վերաբերող Միջկառավարական բանակցային մարմնի «Ծխախոտի դեմ պայքարի» ԱՀԿ շրջանակային կոնվենցայի որոշումները կիրառելի են բացկազմ միջկառավարական աշխատանքային խմբի գործունեության համար,

10. ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է Գլխավոր տնօրենին.

- (1) ապահովել Կոնվենցիայով նախատեսված քարտուղարության պարտականությունները մինչև մշտական քարտուղարության ստեղծումը և գործունեության սկիզբը,
- (2) անհրաժեշտ քայլեր ձեռնարկել անդամ-պետություններին, հատկապես զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու նախապատրաստական աշխատանքներին օժանդակելու համար,
- (3) 2003 թվականի հունիսի 16-ից մինչև Կողմերի Համաժողովը հրավիրել բացկազմ միջկառավարական աշխատանքային խմբի խորհրդակցություններ պահանջվող հաճախականությամբ,
- (4) շարունակել ապահովել ԱՀԿ որոշիչ դերակատարումը ծխախոտի դեմ գլոբալ պայքարի տեխնիկական առաջատարության, կողմնորոշման և աջակցության գործում,
- (5) տեղեկացնել Առողջապահության վեհաժողովին Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ապահովման ընթացքում արձանագրած առաջխաղացման մասին, ինչպես նաև Կողմերի Համաժողովի առաջին նստաշրջանի ծավալվող նախապատրաստական աշխատանքների մասին:

## ՀԱՎԵԼՎԱԾ

### Ծխախոտի դեմ պայքարի ԱՀԿ շրջանակային կոնվենցիա

#### *Ներածություն*

Սույն Կոնվենցիայի Կողմերը,

*վճռականորեն տրամադրված լինելով* մարդկանց առողջությունը պաշտպանելու իրենց իրավունքին գերակա ուշադրություն հատկացնելուն,

*ընդունելով*, որ ծխախոտի համաճարակը գլոբալ հիմնահարց է, որը մարդկանց առողջության համար հղի է լուրջ հետևանքներով, և որը արդյունավետ, անհրաժեշտ և համափարփակ պատասխան գործողություններում պահանջում է հնարավորինս լայն միջազգային համագործակցություն և բոլոր երկրների մասնակցություն,

*արտացոլելով* միջազգային հանրության մտահոգությունը մարդկանց առողջության համար ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության վնասակար հետևանքների, ինչպես նաև ողջ աշխարհում դրանց սոցիալական, տնտեսական և էկոլոգիական հետևանքների կապակցությամբ,

*լուրջ մտահոգություն արտահայտելով* ողջ աշխարհում և հատկապես զարգացող երկրներում ծխախոտային արտադրատեսակների արտադրանքի աճի և օգտագործման ծավալների մեծացման, ինչպես նաև, որ դա ընտանիքների, աղքատ բնակչության և ազգային առողջապահության համակարգերի համար հիմնախնդրային նշանակություն ունի,

*ընդունելով*, որ գիտական տվյալները միանշանակ հաստատում են, որ ծխախոտի օգտագործումն ու ծխախոտի ծխի ներգործությունը հիվանդության, մահվան, և հաշմանդամության պատճառներից են և, որ ծխախոտային արտադրատեսակների օգտագործման ազդեցությունից մինչև ծխախոտի օգտագործման հետ կապված հիվանդությունների առաջացումը ընկած է որոշակի ժամանակաշրջան,

*ևս ընդունելով*, որ ծխախոտային արտադրատեսակները բարձր տեխնոլոգիական արտադրանք են, այնպես մշակված, որ առաջանա և պահպանվի կախվածություն, և որ նրանց շատ բաղադրատարրեր և արտազատվող ծուխը դեղաբանորեն ակտիվ, թունավոր, փոփոխածին և քաղցկեղածին են, ինչպես նաև որ ծխախոտային կախվածությունը հիվանդությունների միջազգային դասակարգումներում դիտվում է որպես առանձին խանգարում,

*ընդունելով*, որ ներկայումս գոյություն ունեն հստակ գիտական տվյալներ, որ ծխախոտի ծուխը ներգործում է երեխաների առողջության և զարգացման վրա ներարգանդային շրջանում,

*խորը մտահոգվելով* ողջ աշխարհում երեխաների և պատանիների ծխելու և ծխախոտ օգտագործելու այլ ձևերի տարածման, հատկապես առավել վաղ հասակում ծխելու կապակցությամբ,

*լուրջ մտահոգվելով* ողջ աշխարհում կանանց և երիտասարդ աղջիկների ծխելու և ծխախոտի օգտագործման այլ ձևերի ծավալների ընդլայնմամբ, և նկատի ունենալով քաղաքականության մշակման և իրագործման բոլոր մակարդակներում կանանց լիակատար մասնակցությունը, ինչպես նաև ծխախոտի դեմ պայքարի գեներալային տեսակետները հաշվի առնող ռազմավարությունների անհրաժեշտությունը,

*խորը մտահոգվելով* բնիկ ժողովուրդների ծխելու և ծխախոտի օգտագործման այլ ձևերի բարձր մակարդակների կապակցությամբ,

*լուրջ մտահոգվելով* ծխախոտային արտադրատեսակների օգտագործման խրախուսելուն նպատակաուղղված գովազդի, վաճառքի խթանման և հովանավորչության բոլոր ձևերի ազդեցության կապակցությամբ,

*ընդունելով*, որ ծխախոտային արտադրատեսակներով ապօրինի առևտրի բոլոր ձևերի, այդ թվում մաքսանենգության, ապօրինի արտադրության և կեղծման վերացման համար անհրաժեշտ են միասնական գործողություններ,

*զիտակցելով*, որ ծխախոտի դեմ պայքարը բոլոր մակարդակներում, հատկապես՝ զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում, պահանջում է բավականաչափ ֆինանսական և տեխնիկական միջոցներ, որոնք համաչափելի են ծխախոտի դեմ պայքարի գործընթացի առկա և կանխագուշակվող պահանջներին,

*ընդունելով* ծխախոտի պահանջարկի կրճատման արդյունավետ ռազմավարությունների երկարաժամկետ սոցիալական և տնտեսական հետևանքների քննարկման պատշաճ մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը,

*նկատի ունենալով* սոցիալական և տնտեսական դժվարությունները, որոնք կարող են առաջացնել միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում որոշ զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում գործադրվող ծխախոտի դեմ ուղղված ծրագրերը, և ընդունելով նրանց տեխնիկական և ֆինանսական օգնության պահանջմունքները ազգային մակարդակով մշակված կայուն զարգացման ռազմավարությունների համատեքստում,

*զիտակցելով* ծխախոտի դեմ պայքարի ոլորտում բազմաթիվ պետություններում վարվող արժեքավոր աշխատանքը, և հավանություն տալով Առողջապահության համաշխարհային կազմակերպության գերակայությանը, ինչպես նաև մյուս կազմակերպությունների և Միավորված ազգերի կազմակերպության մարմինների և այլ միջազգային ու տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների ջանքերը, որոնք ուղղված են ծխախոտի դեմ պայքարի գործում միջոցների մշակմանը,

*ընդգծելով* ազգային և միջազգային մակարդակներում ծխախոտի արդյունաբերության հետ կապ չունեցող հասարակական

կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ անդամների, այդ թվում առողջապահական մասնագիտացված կազմակերպությունների, կանանց, երիտասարդության, բնապահպանական և սպառողների խմբերի, ակադեմիական հաստատությունների ծխախոտի դեմ պայքերի գործում հատուկ ներդրումը, ինչպես նաև ծխախոտի դեմ պայքարի ազգային և միջազգային ջանքերում նրանց կենսականոթեն կարևոր մասնակցությունը,

*ընդունելով* ծխախոտի դեմ պայքարի ջանքերի ձախողմանը և ի չիք դարձնելուն ուղղված ծխախոտի արդյունաբերության յուրաքանչյուր փորձի հանդեպ զգոնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, և ծխախոտի դեմ պայքարի ջանքերի վրա բացասաբար ներգործող ծխախոտի արդյունաբերության գործունեության մասին իրազեկելու անհրաժեշտությունը,

*հիշեցնելով* Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունած տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային պակտի Հոդված 12-ը, որում նշված է, որ յուրաքանչյուր մարդ ունի ֆիզիկական և հոգեկան առողջության հնարավորինս բարձր մակարդակի հասնելու իրավունք,

*նույնպես հիշեցնելով* Առողջապահության համաշխարհային կազմակերպության Կանոնակարգի ներածությունը, որում ասված է, որ առողջության հնարավորինս բարձր մակարդակ ունենալը յուրաքանչյուր մարդու հիմնական իրավունքներից մեկն է՝ առանց նրա ռասայի, դավանանքի, քաղաքական համոզմունքների, տնտեսական կամ սոցիալական դիրքի խտրականության,

*վճռականորեն տրամադրված* աջակցելու ծխախոտի դեմ պայքարի միջոցներին, որոնք հիմնված են ներկայումս գոյություն ունեցող և համապատասխան գիտատեխնիկական և տնտեսական նկատառումների վրա:

*հիշեցնելով*, որ Գլխավոր Ասամբլեայի կողմից 1979 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան նախատեսում է, որ վերջինիս մասնակից պետությունները պատշաճ միջոցներ են ձեռնարկում բժշկա-սանիտարական օգնության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության վերացման համար,

*հիշեցնելով նույնպես*, որ Գլխավոր Ասամբլեայի կողմից 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված Երեխայի իրավունքների կոնվենցիան նախատեսում է, որ վերջինիս մասնակից պետությունները ճանաչում են հնարավորինս բարձր մակարդակի առողջություն ունենալու երեխայի իրավունքը,

*Համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.*

## **ՍԱՍ Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

### *Հոդված 1*

*Տերմինների օգտագործում*

Սույն Կոնվենցիայի նպատակներով.

(ա) **Անօրինական առևտուր՝** գործող օրենսդրությամբ արգելված գործունեության կամ վարքի ձև, որը կապված է արտադրման, առաքման, ստացման, տնօրինման, բաժանման, վաճառքի կամ գնման հետ և որն ունի այդ գործունեության խթանման նպատակ:

(բ) **Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն** յուրաքանչյուր կազմակերպություն, որը ներառում է մի քանի ինքնիշխան պետություններ, և որին իր անդամ պետությունները մի շարք հարցերի վերաբերյալ փոխանցել են իրենց իրավասությունները, ներառյալ այդ հարցերի վերաբերյալ անդամ պետություններին պարտավորեցնող որոշումներ ընդունելու իրավունքը<sup>1</sup>:

(գ) **Գովազդ և ծխախոտի վաճառքի խտանում՝** առևտրային տեղեկատվության փոխանցման, խորհրդատվության կամ գործողության յուրաքանչյուր ձև, որը նպատակ ունի ուղղակիորեն կան անուղղակիորեն խթանելու ծխախոտային արտադրատեսակների վաճառքի կամ ծխախոտի օգտագործումը:

(դ) **Ծխախոտի դեմ պայքար՝** առաջարկի, պահանջարկի և վնասի նվազեցման ռազմավարությունների լայն շրջանակ, որոնք նպատակաուղղված են բնակչության առողջության բարելավմանը՝ ծխախոտային արտադրատեսակների օգտագործման, ինչպես նաև մարդու վրա ծխախոտի ծխի ազդեցության նվազեցման կամ վերացման միջոցով:

(ե) **Ծխախոտի արդյունաբերություն՝** ծխախոտային արտադրատեսակներ արտադրողներ, մեծածախ բաշխողներ և ներկրողներ:

(զ) **Ծխախոտային արտադրատեսակներ՝** արտադանք, որոնք ամբողջությամբ կամ մասամբ արտադրված են հունք հանդիսացող ծխախոտի տերևներից և արտադրված են այնպես, որ օգտագործվի ծխելու, ծծելու, ծամելու կամ ներշնչելու համար:

(է) **Ծխախոտի հովանավորում՝** յուրաքանչյուր իրադարձություն, միջոցառում կամ անձնական ներդրում, որի նպատակը, արդյունքը կամ հնարավոր արդյունքը ուղղակի կամ անուղղակի ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտի օգտագործման խթանումն է:

## *Հոդված 2*

### *Սույն Կոնվենցիայի և այլ համաձայնագրերի և իրավաբանական փաստաթղթերի միջև կապ*

1. Մարդկանց առողջության պահպանման նպատակով, Կողմերը խրախուսվում են միջոցներ ձեռնարկել սույն Կոնվենցիայով և նրա արձանագրություններով պահանջվող միջոցներից զատ, ընդ որում այդ փաստաթղթերում ոչինչ չի արգելում Կողմերին ավելի խիստ պահանջներ ընդունել, որոնք համատեղելի են դրանց դրույթների հետ և համապատասխանում են միջազգային իրավունքին:

2. Սույն Կոնվենցիայի և նրա արձանագրությունների դրույթները ոչ մի կերպ չեն ազդում Կողմերի երկկողմանի կամ բազմակողմանի պայմանագրեր, այդ թվում տարածաշրջանային կամ ենթատարածաշրջանային պայմանագրեր կնքելու իրավունքի վրա Կոնվենցիայի և նրա արձանագրությունների հետ

<sup>1</sup> Համապատասխան դեպքերում «ազգային» սահմանումը կվերաբերվի տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություններին ևս:

առնչվող հարցերի վերաբերյալ, այն պայմանով, որ նման պայմանագրերը համատեղելի են իրենց պարտավորությունների հետ ըստ սույն Կոնվենցիայի և նրա արձանագրությունների: Համապատասխան Կողմերը տեղեկացնում են Կողմերի Համաժողովին նման պայմանագրերի մասին Քարտուղարության միջոցով:

## **ՄԱՍ II. ՆՊԱՏԱԿ, ՂԵԿԱՎԱՐ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### *Հոդված 3*

#### *Նպատակ*

Սույն Կոնվենցիայի և նրա արձանագրությունների նպատակն է ներկա և ապագա սերունդներին պաշտպանել մարդկանց առողջության համար ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության քայքայիչ հետևանքներից, ինչպես նաև սոցիալական, բնապահպանական և տնտեսական հետևանքներից՝ ծխախոտի դեմ պայքարի միջոցների համար համապատասխան շրջանակներ ապահովելու միջոցով՝ շրջանակներ, որոնք ենթակա են Կողմերի իրականացմանը ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, որպեսզի մշտապես և էականորեն կրճատվի ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության տարածվածությունը:

### *Հոդված 4*

#### *Ղեկավար սկզբունքներ*

Սույն Կոնվենցիայի և նրա արձանագրությունների նպատակին հասնելու և դրա դրույթների իրագործման համար Կողմերը ղեկավարվում են ներքոհիշյալ սկզբունքներով.

1. Յուրաքանչյուր մարդ պետք է իրազեկված լինի ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության արդյունքում առողջության համար հետևանքների, մոլուցքի և մահացու վտանգի մասին, և այդ կապակցությամբ ծխախոտի ծխի ազդեցությունից բոլոր մարդկանց պաշտպանության համար հարկավոր է կառավարական մակարդակով ձեռնարկել արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ:
2. Անհրաժեշտ է վճռական քաղաքական կողմնակցություն համակողմանի միջկառուցային միջոցների և համակարգված պատասխան գործողությունների ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով աջակցման գործին, նկատի ունենալով՝
  - ա) ծխախոտի ծխի ազդեցությունից մարդկանց պաշտպանությանն ուղղված միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը,
  - բ) ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր ձևի օգտագործման կանխարգելման, աջակցման դադարեցմանը կամ նվազեցմանն ուղղված միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը,

զ) այն միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը, որոնց նպատակն է աջակցել բնիկ անձանց և համայնքների մասնակցությանը սոցիալական և մշակութային առումով իրենց պահանջների և հեռանկարներին համահունչ ծխախոտի դեմ պայքարի ծրագրերի մշակման, իրագործման և գնահատման մեջ,

դ) ծխախոտի դեմ պայքարի ռազմավարությունների մշակման ընթացքում տարբեր սեռերին հատուկ վտանգերի հաշվի առնելու միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը:

3. Միջազգային համագործակցությունը, հատկապես տեխնոլոգիաների, գիտելիքների և ֆինանսական օժանդակության անհրաժեշտությունը, ինչպես նաև համապատասխան փորձագիտական ծառայությունների տրամադրումը ծխախոտի դեմ պայքարի արդյունավետ ծրագրերի ստեղծման և իրագործման համար, հաշվի առնելով տեղական մշակութային պայմանները, ինչպես նաև սոցիալական, տնտեսական, քաղաքական և իրավաբանական գործոնները, հանդիսանում են սույն Կոնվենցիայի կարևոր մասը:

4. Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման նվազեցմանն ուղղված ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով ձեռնարկվող համակողմանի բազմոլորտ միջոցները և պատասխան գործողությունները անհրաժեշտ են ծխախոտի օգտագործմամբ և ծխախոտի ծխի ազդեցությամբ պատճառաբանված հիվանդացման, վաղաժամկետ հաշմանդամության և մահվան կանխարգելման համար՝ հանրային առողջապահության սկզբունքներին համապատասխան:

5. Պատասխանատվության հարցերը, ինչպես որ նրանց սահմանում է յուրաքանչյուր Կողմ իր իրավասությունների շրջանակներում, հանդիսանում են ծխախոտի դեմ համակողմանի պայքարի կարևոր մասը:

6. Ազգային մակարդակով մշակվող կայուն զարգացման ռազմավարությունների համատեքստում զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերում հարկավոր է ընդունել և հաշվի առնել տեխնիկական և ֆինանսական օգնության կարևորությունը այն ծխախոտ աճեցնող անձանց և ծխախոտի արդյունաբերության ոլորտում աշխատողների տնտեսական վիճակի համար, ում ապրուստի միջոցների վրա լուրջ ազդեցություն է ունենում ծխախոտի դեմ պայքարի ծրագրերի իրագործումը:

7. Սույն Կոնվենցիայի և նրա արձանագրությունների նպատակին հասնելու համար անհրաժեշտ է քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

## *Հոդված 5*

### *Ընդհանուր պարտավորություններ*

1. Յուրաքանչյուր Կողմ մշակում, իրագործում, պարբերաբար նորացնում և վերանայում է ծխախոտի դեմ պայքարի համակողմանի բազմոլորտ ազգային ռազմավարությունները, պլանները և ծրագրերը՝ համաձայն սույն Կոնվենցիայի և նրա արձանագրությունների:

2. Սույն նպատակին հասնելու համար Կողմը, իր հնարավորությունների սահմաններում.

ա) ստեղծում կամ ամրապնդում և ֆինանսավորում է ծխախոտի դեմ պայքարի ազգային համակարգման մեխանիզմը կամ համակարգող մարմինները,

բ) ընդունում և իրագործում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական և /կամ այլ միջոցներ և համապատասխան դեպքերում համագործակցում է այլ Կողմերի հետ ծխախոտի օգտագործման, նիկոտինային կախվածության և ծխախոտի ծխի ազդեցության կանխարգելման և նվազեցման համապատասխան քաղաքականության մշակման գործում:

3. Հանրային առողջապահության ծխախոտի դեմ պայքարի սեփական քաղաքականության մշակման և իրագործման ընթացքում Կողմերը գործում են այնպես, որ ազգային օրենսդրությանը համապատասխան պաշտպանեն իրենց քաղաքականությունը ծխախոտի արդյունաբերության առևտրային և այլ կորպորատիվ շահերից:

4. Կողմերը համագործակցում են սույն Կոնվենցիայի և նրա արձանագրությունների իրագործման առաջարկվող միջոցների, ընթացակարգերի և ղեկավար սկզբունքների մշակման գործում:

5. Համապատասխան դեպքերում Կողմերը համագործակցում են իրավասու միջազգային և տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների և այլ մարմինների հետ սույն Կոնվենցիայի և արձանագրությունների նպատակներին հասնելու գործում:

6. Կողմերը, իրենց տրամադրության տակ գտնվող միջոցների և ռեսուրսների շրջանակներում, ֆինանսական միջոցների մոբիլիզացման նպատակով, երկկողմանի և բազմակողմանի ֆինանսավորման մեխանիզմների օգնությամբ, համագործակցում են սույն Կոնվենցիայի արդյունավետ իրագործման համար:

### ՄԱՍ III. ԾԽԱԽՈՏԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԵՏ ԱՌՆՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

#### *Հոդված 6*

#### *Ծխախոտի պահանջարկի նվազեցմանն ուղղված գնային և հարկային միջոցներ*

1. Կողմերը ընդունում են, որ գնային և հարկային միջոցները բնակչության տարբեր խմբերի, հատկապես երիտասարդության շրջանում ծխախոտի օգտագործման նվազեցման արդյունավետ և կարևոր միջոց են:

2. Առանց հարկային քաղաքականության մշակման Կողմերի ինքնիշխան իրավունքին վնասելու՝ յուրաքանչյուր Կողմ պետք է հաշվի առնի ծխախոտի դեմ պայքարին առնչվող առողջապահության բնագավառում իր ազգային նպատակները և, համապատասխան դեպքերում, կիրառել կամ պահպանել միջոցներ, որոնք կարող են ներառել.

ա) ծխախոտային արտադրատեսակների հանդեպ հարկային քաղաքականության, և նպատակահարմարության դեպքում, գնային քաղաքականության իրականացումը, ծխախոտի օգտագործման նվազեցմանն ուղղված առողջապահության ոլորտում նպատակներին հասնելու աջակցության համար,

բ) համապատասխան դեպքերում, միջազգային ուղևորություններ իրականացնող անձանց հարկերից և մաքսատուրքերից ազատված ծխախոտային արտադրատեսակների վաճառքի, և /կամ իրենց կողմից այդ արտադրատեսակների ներմուծման արգելումը կամ սահմանափակումը:

3. Կողմերը, համաձայն 21-րդ Հոդվածի, Կողմերի Համաժողովին ուղղված իրենց պարբերական զեկույցներում ներկայացնում են տեկեկատվություն

Ժխախտտային արտադրատեսակների հարկադրման դրույքաչափերի և ծխախտտի օգտագործման միտումների մասին:

#### *Հոդված 7*

##### *Ծխախտտի պահանջարկի նվազեցման ոչ գնային միջոցներ*

Կողմերը ընդունում են, որ համակողմանի ոչ գնային միջոցները հանդիսանում են ծխախտտի օգտագործման նվազեցման արդյունավետ և կարևոր միջոց: Յուրաքանչյուր Կողմ ընդունում և իրագործում է ըստ 8-13-րդ Հոդվածների իրենց պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ, և համապատասխան դեպքերում համագործակցում են այլ Կողմերի հետ անմիջապես կամ իրավասու միջազգային մարմինների միջոցով: Կողմերի Համաժողովը առաջարկում է անհրաժեշտ ղեկավար սկզբունքներ այս Հոդվածների դրույթների իրականացման համար:

#### *Հոդված 8*

##### *Պաշտպանություն ծխախտտի ծխի ազդեցությունից*

1. Կողմերը ընդունում են, որ գիտական տվյալները միանշանակորեն հաստատում են, որ ծխախտտի ծխի ազդեցությունը հիվանդությունների, մահվան և հաշմանդամության պատճառներից է:
2. Յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրությամբ սահմանված առկա ազգային իրավասության ոլորտներում ընդունում և իրականացնում է և իրավասության այլ մակարդակներում ակտիվորեն աջակցում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական և /կամ այլ միջոցների ընդունմանն ու իրականացմանը, որոնք ապահովում են ծխախտտի ծխի ազդեցությունից պաշտպանությունն աշխատանքային տեղերում տարածքների ներսում, հասարակական տրանսպորտում, փակ և, համապատասխան դեպքերում, այլ հասարակական վայրերում:

#### *Հոդված 9*

##### *Ծխախտտային արտադրատեսակների բաղադրության կարգավորում*

Կողմերի Համաժողովը միջազգային իրավասու մարմինների խորհրդատվությամբ առաջարկում է ծխախտտային արտադրատեսակների և դրանցից արտազատվող բաղադրիչների փորձաքննության և չափագրման, ինչպես նաև այդ բաղադրության և արտազատվող նյութերի կարգավորման ղեկավար սկզբունքներ: Յուրաքանչյուր Կողմ ընդունում և ազգային իրավասու մարմինների կողմից հավանություն ստանալու դեպքերում իրականացնում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ այդպիսի փորձաքննության և չափագրման, ինչպես նաև նման կարգավորման վերաբերյալ:

## Հոդված 10

### *Ծխախոտային արտադրատեսակների բաղադրության բացման կարգավորում*

Յուրաքանչյուր Կողմ, ըստ իր ազգային օրենսդրության, ձեռնարկում և իրականացնում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ, որոնք ծխախոտային արտադրատեսակներ արտադրողներից և ներմուծողներից պահանջում են հրապարակված տեղեկատվություն ծխախոտային արտադրատեսակների և դրանցից արտազատվող նյութերի բաղադրության մասին: Բացի դրանից, յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում և իրականացնում է ծխախոտային արտադրատեսակների և դրանցից արտազատվող նյութերի բաղադրիչների մասին հասարակությանը իրազեկելու արդյունավետ միջոցներ:

## Հոդված 11

### *Ծխախոտային արտադրատեսակների փաթեթավորում ու պիտակավորում*

1. Յուրաքանչյուր Կողմ՝ տվյալ Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից երեք տարվա ընթացքում իր ազգային օրենսդրության համաձայն արդյունավետ միջոցներ է ձեռնարկում և իրականացնում, որպեսզի.

ա) ծխախոտային արտադրատեսակների փաթեթավորումն ու պիտակավորումը չխթանեն ծխախոտային արտադրատեսակի վաճառքը ցանկացած կաղծարարական ճանապարհով, կամ ծխախոտի բաղադրիչների՝ առողջության վրա ազդեցության վտանգների կամ արտազատվող նյութերի մասին թյուր տպավորություն է ստեղծում՝ ներառյալ յուրաքանչյուր տերմին, նկարագրում, առևտրային մակնշում, սիմվոլ կամ այլ նիշ, որոնք ուղղակի կամ անուղղակի թյուր տպավորություն են ստեղծում այն մասին, որ որևէ որոշակի ծխախոտային արտադրատեսակ մյուս ծխախոտային արտադրատեսակներից պակաս վնասակար է: Դրանք կարող են պարունակել այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «խեժերի ցածր պարունակությամբ», «թեթև», «շատ թեթև» կամ «փափուկ»,

բ) ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր տուփի և փաթեթի պիտակի վրա տեղ գտնեն առողջության համար վնասակարությունը վկայակոչող և ծխախոտի օգտագործման քայքայիչ հետևանքները նկարագրող նախազգուշացումները, ինչպես նաև որպեսզի կարողանան զետեղվել այլ համապատասխան տեղեկություններ: Նման նախազգուշացումները և տեղեկությունները.

- հաստատվում են ազգային իրավասու մարմինների կողմից,
- պարբերաբար փոփոխվում են,
- խոշոր, պարզորոշ, տեսանելի և հեշտ ընթեռնելի են,
- գրավում են հիմնական պիտակավորված մակերեսի 50% կամ ավելին, բայց ոչ մի դեպքում հիմնական պիտակավորված մակերեսի 30%-ից ոչ պակաս,
- կարող են կատարված լինել նկարների կամ պիկտոգրամների ձևով, կամ պարունակել դրանք:

2. Յուրաքանչյուր տուփի և ծխախոտային արտադրատեսակների փաթեթի պիտակի վրա, ի լրումն նախազգուշացումների, որոնք նախատեսված են սույն Հոդվածի բ) կետում, պետք է զետեղվի տեղեկատվություն ծխախոտային

արտադրատեսակների բաղադրամասերի և դրանցից արտազատվող նյութերի մասին՝ ինչպես սահմանված է ազգային մարմինների կողմից:

3. Յուրաքանչյուր Կողմ պահանջում է, որ սույն Հոդվածի բ) կետում և 2-րդ կետում նշված նախազգուշացումները և այլ տեքստային տեղեկատվությունը, տեղ գտնեն յուրաքանչյուր ծխախոտային արտադրատեսակի տուփի և փաթեթի պիտակի վրա՝ իր հիմնական լեզվով կամ հիմնական լեզուներով:

4. Սույն Կոնվենցիայի նպատակներով «արտաքին փաթեթավորում ու պիտակավորում» տերմինը կիրառելի է ծխախոտային արտադրատեսակների վերաբերյալ՝ տվյալ արտադրատեսակի մեծածախ վաճառքում օգտագործվող յուրաքանչյուր փաթեթի ու պիտակի նկատմամբ:

### *Հոդված 12*

#### *Կրթություն, տեղեկատվության փոխանցում, բնակչության նախապատրաստում ու իրազեկություն*

Յուրաքանչյուր Կողմ պահպանում և ուժեղացնում է բնակչության ծխախոտի դեմ պայքարի հարցերի մասին իրազեկության համակարգը, համապատասխան դեպքերում օգտագործելով բոլոր առկա տեղեկատվության միջոցները: Այդ նպատակներով յուրաքանչյուր Կողմ նախաձեռնում և իրականացնում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցները, որոնք նպատակաուղղված են հետևյալի աջակցությանը.

ա) ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության, այդ թվում ընտելանալու, առողջության համար վտանգների մասին բնակչության կրթության և իրազեկման արդյունավետ և համակողմանի ծրագրերի լայն հասանելիության,

բ) ինչպես որ դա նշված է 14.2-րդ Հոդվածում, ծխախոտի օգտագործման և առողջության համար ծխախոտի ծխի ազդեցության վտանգների, ինչպես նաև ծխախոտի օգտագործման դադարեցման և ծխախոտից ազատ ապրելակերպի առավելությունների մասին բնակչության իրազեկման,

գ) բնակչության, ըստ ազգային օրենսդրության, ծխախոտի արդյունաբերության մասին սույն Կոնվենցիայի վերաբերվող ամենաբազմաբնույթ տեղեկատվության հասանելիության,

դ) ծխախոտի դեմ պայքարի արդյունավետ և պատշաճ նախապատրաստական ծրագրերի կամ այնպիսի իրեզակության և կրթության բարձրացման ծրագրերի, որոնք նպատակաուղղված են առողջապահության, համայնքերի, սոցիալական ոլորտի, զանգվածային լրատվամիջոցների աշխատողներին, ղեկավար և այլ անձանց,

ե) ծխախոտի արդյունաբերության հետ առնչություն չունեցող պետական և մասնավոր հիմնարկությունների և հասարակական կազմակերպությունների ծխախոտի դեմ պայքարի ոլորտում միջկառուցային ծրագրերի մշակման և իրագործման մասին իրազեկման և մասնակցության,

զ) բնակչության իրազեկման և ծխախոտի արտադրման և օգտագործման բնակչության առողջության համար բացասական հետևանքների, ինչպես նաև նրա տնտեսական և բնապահպանական բացասական հետևանքների մասին տեղեկատվության հասանելիության:

### Հոդված 13

#### *Ծխախոտի արտադրատեսակների գովազդը, վաճառքի խթանում ու հովանավորություն*

1. Կողմերը ընդունում են, որ գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության լիակատար արգելումը կրեթի ծխախոտային արտադրատեսակների օգտագործման նվազեցմանը:

2. Յուրաքանչյուր Կողմ, իր սահմանադրության կամ սահմանադրական դրույթների համաձայն, ամբողջությամբ արգելում է ծխախոտային արտադրատեսակների գովազդը, վաճառքի խթանումը և հովանավորությունը: Դա ներառում է, իրավական պայմանների պահպանումն ու այդ Կողմի ունեցած տեխնիկական միջոցների առկայությունը հաշվի առնելով, իր տարածքից դուրս եկող անդրասահմանային գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության լիակատար արգելակումը: Այդ կապակցությամբ, յուրաքանչյուր Կողմ, իր համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հինգ տարվա ընթացքում պատշաճ օրենսդրական, գործադիր, վարչական և/ կամ այլ միջոցներ է ձեռնարկում և ներկայացնում է համապատասխան զեկույցներ, ըստ 21-րդ Հոդվածի:

3. Իր սահմանադրության կամ սահմանադրական սկզբունքների պատճառով լիակատար արգելում ուժի մեջ մտցնելու հնարավորություն չունեցող Կողմը կիրառում է ծխախոտային արտադրատեսակների ողջ գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության սահմանափակումներ: Դա ներառում է, իրավական պայմանների պահպանումն ու, այդ Կողմի ունեցած տեխնիկական միջոցների առկայությունը հաշվի առնելով՝ իր տարածքից հասնող և անդրսահմանային ներգործություն ունեցող գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության սահմանափակումները կամ լիակատար արգելումը: Այդ կապակցությամբ, յուրաքանչյուր Կողմ այդ Կողմի համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հինգ տարվա ընթացքում պատշաճ օրենսդրական, գործադիր, վարչական և/ կամ այլ միջոցներ և ներկայացնում է համապատասխան զեկույցներ, ըստ Հոդված 21-ի:

4. Նվազագույնը և համաձայն իր սահմանադրության կամ սահմանադրական դրույթների, յուրաքանչյուր Կողմ.

ա) արգելում է ծխախոտային արտադրատեսակների գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության բոլոր ձևերը, որոնք խթանում են ծխախոտային արտադրատեսակների առաջխաղացումը շուկայում այնպիսի միջոցներով, որոնք կեղծ են, մոլորեցնող կամ այլ կերպ՝ ստվերային կամ որոնք կարող են թյուր տպավորություն ստեղծել նրանց բնութագրերի, առողջության վրա ազդեցության, վտանգների կամ արտադրվող նյութերի մասին,

բ) պահանջում է, որ առողջության համար վնասի նախազգուշացումը կամ այլ համապատասխան նախազգուշացում ուղեկցի ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր գովազդի, և համապատասխան դեպքերում՝ վաճառքի խթանմանն ու հովանավորությանը,

գ) սահմանափակում է ծխախոտային արտադրատեսակների բնակչության ձեռքբերման ուղղակի կամ անուղղակի խթանների օգտագործումը,

դ) պահանջում է, եթե նա ուժի մեջ չի մտցրել լիակատար արգելումը, համապատասխան պետական մարմիններին տեղեկատվություն ներկայացնի՝ ծխախոտի արդյունաբերության ծախսերի մասին դեռևս չարգելված գովազդի, վաճառքի խթանման ու հովանավորության համար: Այդ մարմինները, ըստ

ազգային օրենսդրության, կարող են որոշում ընդունել այդ տվյալների՝ հասարակությանը և Կողմերի Համաժողովի տրամադրությանը ներկայացնելու մասին՝ ի կատարումն 21-րդ Հոդվածի,

ե) լիակատար արգելում է մտցնում, կամ իր սահմանադրության կամ սահմանադրական դրույթների պատճառով լիակատար արգելումը մտցնելու անկարող Կողմի դեպքում՝ սահմանափակում է գովազդը, վաճառքի խթանումն ու հովանավորությունը ռադիոյով, հեռուստատեսությամբ, տպագիր և, համապատասխան դեպքերում, այլ զանգվածային լրատվական միջոցներում, օրինակ՝ Ինտերնետում, հինգ տարվա ընթացքում,

զ) արգելում է կամ, իր սահմանադրության կամ սահմանադրական դրույթների պատճառով լիակատար արգելումը մտցնելու անկարող Կողմի դեպքում՝ սահմանափակում է ծխախոտային արտադրատեսակների հովանավորությունը միջազգային իրադարձությունների, միջոցառումների ժամանակ կամ նրանց մասնակիցների շրջանում:

5. Խրախուսվում է, որ Կողմերը իրականացնեն 4-րդ կետում զետեղված պարտավորություններից բխող միջոցներ:

6. Կողմերը համագործակցում են անդրսահմանային գովազդի վերացմանն օժանդակելու համար պահանջվող տեխնոլոգիաների և այլ միջոցների մշակման գործում:

7. Կողմերը, որոնք արդեն մտցրել են ծխախոտի գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության որոշ ձևերի արգելում, ունեն ինքնիշխան իրավունք արգելել այն անդրսահմանային գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության ձևերը, որոնք նրա տարածք են հասնում, և կիրառել նույն պատժամիջոցները, որոնք ըստ իր ազգային օրենսդրության, կիրառվում են իր տարածքից դուրս եկող գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության հանդեպ: Սույն կետը չի նշանակում որևէ կոնկրետ պատժամիջոցի հավանություն կամ հաստատում:

8. Կողմերը կքննարկեն արձանագրություն, որում շարադրված կլինեն անդրսահմանային գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության լիակատար արգելմանն ուղղված միջազգային համագործակցություն պահանջող համապատասխան միջոցներ:

#### *Հոդված 14*

##### *Ծխախոտից կախվածության ու ծխախոտի օգտագործման դադարեցմանը վերաբերող պահանջարկի նվազեցման միջոցներ*

1. Յուրաքանչյուր Կողմ, հաշվի առնելով ազգային հանգամանքներն ու գորակայությունները, մշակում և տարածում է գիտական և գործնական տվյալների վրա հիմնված պատշաճ, համակողմանի և համալիր ղեկավար սկզբունքներ, և ձեռնարկում է արդյունավետ միջոցներ ծխախոտի օգտագործման դադարեցման և ծխախոտից կախվածության բուժման համապատասխան արդյունավետ միջոցներ:

2. Այդ նպատակին հասնելու համար յուրաքանչյուր Կողմ ձգտում է.

ա) մշակել և իրականացնել ծխախոտի օգտագործման դադարեցման աջակցելուն ուղղված արդյունավետ ծրագրեր, այդ թվում այնպիսի վայրերում, ինչպիսիք են ուսումնական հաստատությունները, բժշկա-սանիտարական կազմակերպությունները, աշխատանքային տեղերը և մարզական միջոցառումների անցկացման վայրերը,

բ) ծխախոտից կախվածության ախտորոշումը և բուժումը և ծխախոտի օգտագործման դադարեցման վերաբերյալ խորհրդատվությունն ընդգրկել առողջապահության և լուսավորության ոլորտում ազգային ծրագրերի, պլանների և ռազմավարությունների մեջ համապատասխան դեպքերում առողջապահության, համայնքների և սոցիալական ոլորտի աշխատողների մասնակցությամբ,

գ) բժկա-սանիտարական օգնության կազմակերպություններում և վերականգնողական կենտրոններում ստեղծել ծխախոտից կախվածության ախտորոշման, խորհրդատվության, նախազգուշական և բուժման ծրագրեր,

դ) համագործակցել այլ Կողմերի հետ ծխախոտից կախվածության բուժման հնարավորության և մատչելիության, բուժման գնի մատչելիության գործում, այդ թվում՝ դեղագործական պատրաստուկների առումով, համաձայն 22-րդ Հոդվածի: Նման պատրաստուկներ ու նրանց բաղադրամասեր կարող են ներառել դեղամիջոցները, դեղապատրաստուկները, որոնք կիրառվում են դեղամիջոցների ներմուծման համար, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, ախտորոշման համար օգտագործվող պատրաստուկներ:

#### **ՄԱՍ IV. ԾԽԱԽՈՏԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ**

##### *Հոդված 15*

##### *Ծխախոտային արտադրատեսակներով ապօրինի առևտուր<sup>1</sup>*

1. Կողմերը ընդունում են, որ ծխախոտի ապօրինի առևտրի բոլոր ձևերի, այդ թվում մաքսանենգության, ապօրինի արտադրման և կեղծման վերացումը, ինչպես նաև ենթատարածաշրջանային, տարածաշրջանային և գլոբալ համաձայնագրերից զատ համապատասխան ազգային օրենսդրության մշակումն ու իրականացումը հանդիսանում են ծխախոտի դեմ պայքարի անհրաժեշտ բաղադրամասեր:

2. Յուրաքանչյուր Կողմ ընդունում և իրականացնում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ, որպեսզի ապահովվի ծխախոտային արտադրատեսակների բոլոր տուփերի ու փաթեթների և նման արտադրատեսակների յուրաքանչյուր արտաքին փաթեթի պիտակավորումը ծխախոտային արտադրատեսակների ծագումը որոշելու Կողմերին օգնություն ցույց տալու համար, և ազգային օրենսդրության և համապատասխան երկկողմանի ու բազմակողմանի պայմանագրերի համաձայն, շեղվելու կետը որոշելու, մոնիթորինգի, արձանագրելու և ծխախոտային արտադրատեսակների տեղաշարժի և նրանց իրավական կարգավիճակի վերահսկողության գործում Կողմերին օժանդակելու համար: Բացի այդ, յուրաքանչյուր Կողմ.

ա) պահանջում է, որ մանրածախ և մեծածախ առևտրի համար բոլոր ծխախոտային արտադրատեսակների առանձին տուփերն ու փաթեթները, որոնք վաճառվում են տեղական շուկայում, պարունակեն հետևյալ տեքստը.

---

<sup>1</sup> Նախնական շրջանում և քննարկման ընթացքում տեղի ունեցավ լայն քննարկում ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի մասին արձանագրության ընդունման վերաբերյալ: Նման արձանագրության վերաբերյալ բանակցություններ Բանակցային միջկառավարական մարմինը (MOP) կարող է սկսել Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիայի (FCTC) ընդունումից անմիջապես հետո, կամ Կողմերի Համաժողովի ավելի ուշ փուլում:

*«Վաճառքը թույլատրվում է միայն (նշել երկրի, ենթասագային, տարածաշրջանային կամ դաշնային տարածքային միավորի անվանումը)»,* կամ պարունակեն յուրաքանչյուր այլ արդյունավետ պիտակավորում, որում նշված կլինի հասցեագրման վերջնական կետը, կամ որը օգնի մարմիններին պարզելու, արդյոք օրինական հիմունքներով է հայտնվել տվյալ արտադրատեսակը ներքին շուկայում,

բ) համապատասխան դեպքերում քննարկում է գործնականորեն հսկողության համակարգի ստեղծման հարցը, որը կնպաստի բաշխման համակարգի անվտանգությանը և կօժանդակի ապօրինի առևտրի դեպքերի հետաքննությանը:

3. Յուրաքանչյուր Կողմ պահանջում է, որ սույն Հոդվածի 2-րդ կետում նշված փաթեթի վրայի տեղեկատվությունը կամ պիտակավորումը ներկայացված լինի պարզ և /կամ հիմնական լեզվով կամ լեզուներով:

4. Ծխախոտի արտադրատեսակներով ապօրինի առևտրի վերացման նպատակով յուրաքանչյուր Կողմ.

ա) մոնիթորինգ է անցկացնում և տվյալներ հավաքում ծխախոտային արտադրատեսակներով անդրասահմանային առևտրի մասին, ներառյալ ապօրինի առևտուրը, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, տեղեկատվություն է փոխանակում մաքսային, հարկային և այլ մարմինների միջև ազգային օրենսդրության և կիրառելի երկկողմանի կամ բազմակողմանի պայմանագրերի համաձայն,

բ) ընդունում կամ ուժեղացնում է օրենսդրությունը համապատասխան պատժամիջոցներով և ուղղիչ միջոցներով, ոոնքն ուղղված են ծխախոտային արտադրատեսակների, այդ թվում՝ կեղծ և մաքսանենգ, ապօրինի առևտրի դեմ,

գ) անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում, որպեսզի ապահովվի բոլոր բռնագրավված արտադրական սարքավորումների, կեղծ և մաքսանենգային սիգարետները և այլ ծխախոտային արտադրատեսակների ոչնչացումը, օգտագործելով, պրակտիկ իրականանելիության դեպքում, էկոլոգիակապես մաքուր մեթոդները, կամ վերացումը՝ ներքին օրենսդրության համաձայն,

դ) ձեռնարկում և իրականացնում է մոնիտորինգի, վավերագրման և վերահսկողության նպատակով և պահեստավորվող կամ հարկերից և մաքսերից ազատված ռեժիմով փոխադրվող ծխախոտային արտադրատեսակների պահմանմանն ու բաշխմանն ուղղված միջոցներ իր իրավասության շրջանակներում, և

ե) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ ծխախոտային արտադրատեսակներով ապօրինի առևտրից ստացվող եկամուտների բռնագրավման նպատակով:

5. Սույն Հոդվածի 4 ա) և 4 բ) ենթակետերի հիման վրա հավաքագրված տեղեկատվությունը համապատասխան դեպքերում Կողմերը ամփոփ ձևով ներկայացվում են Կողմերի Համաժողովին իրենց պարբերական զեկույցներում, համաձայն 21-րդ Հոդվածի:

6. Կողմերը, համապատասխան դեպքերում և ազգային օրենսդրության համաձայն, աջակցում են համագործակցությանը ազգային հաստատությունների, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային միջկառավարական կազմակերպությունների միջև այնքանով, որքանով որ դա վերաբերվում է հետաքննություններին, դատական հետապնդումներին և արարողություններին ծխախոտային արտադրատեսակներով ապօրինի առևտրի վերացման նպատակով:

7. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ձեռնարկել և իրականացնել հետագա միջոցներ, այդ թվում համապատասխան դեպքերում՝ արտոնագրում,

Ժխախոտային արտադրատեսակների արտադրման և բաշխման հսկողության կամ կարգավորման համար ծխախոտի ապօրինի առևտրի կանխարգելման նպատակով:

### Հոդված 16

#### Վաճառք անչափահասներին և անչափահասների կողմից

1. Յուրաքանչյուր Կողմ համապատասխան կառավարական մակարդակում ձեռնարկում և իրականացնում է ներքին օրենսդրությամբ, ազգային օրենսդրությամբ սահմանված տարիքը, կամ տասնութ տարի չլրացած անձանց ծխախոտային արտադրատեսակների վաճառքի արգելմանն ուղղված արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ: Այլ միջոցները կարող են ներառել.

ա) պահանջ, որպեսզի ծխախոտի արտադրատեսակների բոլոր վաճառողները իրենց վաճառակետի ներսի տեսանելի մասում տեղադրեն պարզ հայտարարություն անչափահասներին ծխախոտային արտադրատեսակների վաճառքի արգելման մասին, և, կասկածելու դեպքում, ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր գնորդից պահանջեն օրենքով սահմանված չափահասությունը հաստատող փաստաթուղթ,

բ) ծխախոտային արտադրատեսակները ուղղակի հասանելի դարձնող, օրինակ՝ ինքնասապասարկում, վաճառքի ցանկացած ձևի արգելում,

գ) ծխախոտային արտադրատեսակների ձև ունեցող անչափահասների ուշադրությունը գրավող կոնֆետների, խորտիկների, խաղալիքների կամ այլ առարկաների արտադրման և վաճառքի արգելում,

դ) այնպիսի դրության ապահովում, որի պայմաններում իր իրավասության տակ գտնվող ծխախոտային արտադրատեսակների վաճառքի ավտոմատները անհասանելի լինեն անչափահասների համար և չխթանեն ծխախոտային արտադրատեսակների վաճառքը անչափահասներին:

2. Յուրաքանչյուր Կողմ արգելում է բնակչության մեջ և հատկապես անչափահասների շրջանում անվճար ծխախոտային արտադրատեսակների տարածումը կամ նպաստում է արգելմանը:

3. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է արգելել ծխախոտի հատավաճառը կամ կամ փոքր փաթեթներով վաճառքը, որն ավելացնում է մնաց արտադրատեսակների հասանելիությունը անչափահասներին:

4. Կողմերը ընդունում են, որ արդյունավետության բարձրացման համար ծխախոտային արտադրատեսակների անչափահասներին վաճառքի կանխարգելման միջոցները անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվեն սույն Կոնվենցիայում գետեղված մյուս դրույթների հետ զուգակցված:

5. Կոնվենցիայի ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման կամ նրան միանալու պահին, կամ ցանկացած ժամանակ հետագայում Կողմը պարտադրող գրավոր հայտարարության միջոցով կարող է նշել, որ նա պարտավորվում է ծխախոտային արտադրատեսակների վաճառքի ավտոմատների շահագործման մեջ մտցնելու արգելումը իր իրավասությունների շրջանակներում, կամ, համապատասխան դեպքերում, ուժի մեջ մտցնի ծխախոտային արտադրատեսակների վաճառքի ավտոմատների լիակատար արգելում: Սույն Հոդվածի հիման վրա արված հայտարարությունը ուղարկվում է Կոնվենցիայի բոլոր Կողմերին:

6. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում և իրականացնում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ, ներառյալ

պատժամիջոցներ մանրածախ և մեծածախ առևտրականների հանդեպ, սույն Հոդվածի 1-5 կետերում զետեղված պարտավորությունների պահպանման ապահովման նպատակով:

7. Յուրաքանչյուր Կողմին, համապատասխան դեպքերում, հարկավոր է ձեռնարկել և իրականացնել օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ ներքին օրենսդրությամբ, ազգային օրենսդրությամբ սահմանված տարիքը, կամ տասնութ տարի չլրացած անձանց ծխախոտային արտադրատեսակների վաճառքը արգելելու նպատակով:

#### *Հոդված 17*

#### *Աջակցություն տնտեսապես կենսունակ գործունեության այլընտրանքային ձևերին*

Կողմերը, համագործակցելով այլ Կողմերի և միջազգային ու տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների հետ, անհրաժեշտության դեպքում աջակցում են ծխախոտի արտադրությամբ և աճեցմամբ զբաղվող տնտեսապես կենսունակ այլ կազմակերպությունների և, համապատասխան դեպքերում, անհատ վաճառողներին:

#### **ՄԱՍ V. ԸՐՋԱԿԱ ՄԵՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

#### *Հոդված 18*

#### *Շրջակա միջավայրի և մարդկանց առողջության պահպանություն*

Ըստ սույն Կոնվենցիայի իրենց տարածքում ծխախոտի աճեցման և ծխախոտային արտադրատեսակների արտադրման վերաբերյալ իրենց պարտավորությունների կատարման ընթացքում Կողմերը համաձայնում են պատշաճ կերպով հաշվի առնել շրջակա միջավայրի և շրջակա միջավայրի հետ կապված մարդկանց առողջության պահպանության հարցերը:

#### **ՄԱՍ V. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

#### *Հոդված 19*

#### *Պատասխանատվություն*

1. Ծխախոտի դեմ պայքարի նպատակով, Կողմերը քննարկում են օրենսդրական միջոցների ընդունման կամ գործող օրենսդրության զարգացման հնարավորությունը անհրաժեշտության դեպքում քրեական և քաղաքացիական պատասխանատվության հարցերի լուծման համար, համապատասխան դեպքերում՝ փոխհատուցման:

2. Կողմերը, համաձայն 21-րդ Հոդվածի, համագործակցում են իրար հետ տեղեկատվության փոխանակման գործում Կողմերի Համաժողովի միջոցով, այդ թվում.

ա) ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտի ծխի ազդեցության հետևանքների մասին տեղեկատվության՝ համաձայն 20.3 ա) և բ) Հոդվածի, և գործող օրենսդրության և կանոնների, ինչպես նաև համապատասխան դատական գործունեության մասին տեղեկատվության:

3. Կողմերը, համապատասխան դեպքերում և փոխադարձ համաձայնությամբ, իրար օգնություն են ցուցաբերում ազգային օրենսդրության, քաղաքականության, իրավական գործունեության և կիրառելի առկա պայմանագրային մեխանիզմների շրջանակներում քաղաքացիական և քրեական պատասխանատվությանը վերաբերվող դատավարական գործողությունների իրականացման մեջ, համաձայն սույն Կոնվենցիայի:

4. Կոնվենցիան ոչ մի կերպ չի ազդում կամ չի սահմանափակում Կողմերի իրենց դատական ատյաններ մուտքի իրավունքները, որտեղ առկա են նման իրավունքներ:

5. Կողմերի Համաժողովը կարող է քննարկել հարցեր, հաշվի առնելով համապատասխան միջազգային հավաքներում կատարվող աշխատանքը՝ հնարավորինս վաղ փուլում, որոնք կապված են պատասխանատվության հետ, ներառյալ պատշաճ միջազգային մոտեցումները այդ հարցերին և, ըստ իրենց իսկ խնդրանքի՝ իրենց օրենսդրական և այլ գործունեության մեջ Կողմերին աջակցություն ցուցաբերելու պատշաճ միջոցները, համաձայն սույն Հոդվածի:

## **ՍԱՍ VII. ԳԻՏԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒՆԱՆԱԿՈՒՄ**

### *Հոդված 20*

#### *Գիտական հետազոտություններ, համաճարակային հսկողություն և տեղեկատվության փոխանակում*

1. Կողմերը ձեռնարկում են տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում ծխախոտի դեմ պայքարի ոլորտում ազգային հետազոտությունների զարգացմանն ու աջակցությանը, գիտահետազոտական ծրագրերի համակարգմանն ուղղված միջոցներ: Այդ նպատակին հասնելու համար յուրաքանչյուր Կողմ.

ա) նախաձեռնում և իրականացնում է համագործակցություն, անմիջապես կամ իրավասու միջազգային և տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների և այլ մարմինների միջոցով, հետազոտությունների անցկացման և գիտական գնահատման բնագավառում և այդ ընթացքում աջակցում և քաջալերում է այն հետազոտությունները, որոնք ուղղված են ծխախոտի օգտագործման որոշիչ գործոնների և հետևանքների և ծխախոտի ծխի ազդեցության ուսումնասիրություններին, ինչպես նաև այլընտրանքային մշակաբույսերի հայտնաբերմանն ուղղված ուսումնասիրություններին,

բ) իրավասու միջազգային և տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների և այլ մարմինների օգնությամբ՝ զարգացնում և ամրապնդում է պատրաստումն ու աջակցությունը բոլոր նրանց, ովքեր զբաղվում են ծխախոտի դեմ պայքարի գործունեությամբ, այդ թվում գիտական հետազոտություններով, իրագործմամբ և գնահատմամբ:

2. Կողմերը համապատասխան դեպքերում ստեղծում են ազգային, տարածաշրջանային և գլոբալ ծրագրեր ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության ծավալների, կառուցվածքների, որոշիչ գործոնների և հետևանքների համաճարակային հսկողության համար: Այդ նպատակով Կողմերը ծխախոտի համաճարակային հսկողության ծրագրերը ընդգրկում են առողջության վիճակի ազգային, տարածաշրջանային և գլոբալ համաճարակային հսկողության ծրագրերում, որպեսզի համապատասխան

դեպքերում ապահովեն տվյալների համադրելիությունը և վերլուծության հնարավորությունը տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

3. Կողմերը ընդունում են միջազգային և տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների և ուրիշ մարմինների ֆինանսական և տեխնիկական օգնության նշանակությունը: Յուրաքանչյուր Կողմ ձգտում է.

ա) աստիճանաբար ստեղծել ազգային համակարգ ծխախոտի օգտագործման և համապատասխան սոցիալական և տնտեսական ցուցանիշների և առողջության ցուցանիշների համաճարագային հսկողության համար,

բ) համագործակցել իրավասու միջազգային և տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների և այլ մարմինների, այդ թվում կառավարական և ոչ կառավարական հաստատությունների հետ տարածաշրջանային և գլոբալ ծխախոտի համաճարակային հսկողության ոլորտում, ինչպես նաև սույն Հոդվածի 3 ա) կետում նշված ցուցանիշների մասին տեղեկատվության փոխանակման մեջ, և

գ) գործակցել Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ ծխախոտի հետ կապված համաճարակային հսկողության տվյալների հավաքագրման, վերլուծության և տարածման սահմանման համար ընդհանուր դեկլարող սկզբունքների կամ ընթացակարգերի մշակման գործում:

4. Կողմերը, ըստ իրենց ազգային օրենսդրության, աջակցում և թեթևացնում են սույն Կոնվենցիային վերաբերող բաց գիտահետազոտական, սոցիալ-տնտեսական, առևտրային և իրավական տեղեկատվության, ինչպես նաև ծխախոտի արդյունաբերության և աճեցման գործընթացին առնչվող տեղեկատվության փոխանակումը, և այդ ընթացքում հաշվի են առնում զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերի առանձնահատուկ կարիքները:

Յուրաքանչյուր Կողմ ձգտում է.

ա) աստիճանաբար ստեղծել և պահպանել ծխախոտի դեմ պայքարը կարգավորող օրենքներ և կանոններ պարունակող և, համապատասխան դեպքերում, նրանց կիրառան ապահովման մասին տեղեկության, ինչպես նաև համապատասխան դատական գործունեության մասին տվյալների նորացած բազան, և համագործակցել տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում ծխախոտի դեմ պայքարի ոլորտում ծրագրերի մշակմանը,

բ) աստիճանաբար ստեղծել և պահպանել, համաձայն սույն Հոդվածի 3 ա) կետի, համաճարակային հսկողության ազգային ծրագրերից ստացած տվյալների նորացված բազան, և

գ) համագործակցել իրավասու միջազգային կազմակերպությունների հետ սույն Կոնվենցիայի կամ ծխախոտի դեմ պայքարի ազգային գործունեության վրա ազդող ծխախոտի արտադրման և ծխախոտային արտադրատեսակների պատրաստման, ինչպես նաև ծխախոտի արդյունաբերության գործունեության մասին տեղեկատվության մշտական հավաքի և աջակցման գլոբալ համակարգի աստիճանաբար ստեղծելու նպատակով:

5. Կողմերին հարկավոր է համագործակցել տարածաշրջանային և միջազգային միջկառավարական կազմակերպությունների և ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև զարգացման հարցերով զբաղվող իրենց անդամագրած հիմնարկությունների շրջանակներում տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները Քարտուղարությանը տրամադրելու նպատակով, որպեսզի օգնություն տրամադրվի զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին հետազոտությունների, համաճարակային

հսկողության և տեղեկատվության փոխանակման իրենց պարտավորությունների կատարման համար:

### *Հոդված 21*

#### *Հաշվետվություն և տեղեկատվության փոխանակում*

1. Յուրաքանչյուր Կողմ Քարտուղարության միջոցով Կողմերի Համաժողովին է ներկայացնում Կոնվենցիայի՝ իր կատարման մասին պարբերական զեկույցներ, որոնք պետք է պարունակեն հետևյալը.
  - ա) տեղեկատվություն Կոնվենցիայի իրականացման նպատակով ընդունված օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցների մասին,
  - բ) տեղեկատվություն, համապատասխան դեպքերում, Կոնվենցիայի իրականացման ընթացքում հանդիպած ցանկացած արգելքի և խոչընդոտի մասին, և դրանց հաղթահարման համար ընդունված միջոցների մասին,
  - գ) տեղեկատվություն, համապատասխան դեպքերում, ծխախոտի դեմ պայքարի գործունեության համար տրամադրված կամ ստացած ֆինանսական և տեխնիկական օգնության մասին,
  - դ) տեղեկատվություն համաճարակային հսկողության և տեղեկատվության մասին, ինչպես նշված է 20-րդ Հոդվածում,
  - ե) 6.3, 13.2, 13.3, 13.4 դ), 15.5 և 19.2-րդ Հոդվածներում նշված տեղեկատվություն:
2. Բոլոր Կողմերի զեկույցների ներկայացման հաճախությունն ու ձևը որոշվում է Կողմերի Համաժողովը: Յուրաքանչյուր Կողմ պատրաստում է իր սկզբնական զեկույցը տվյալ Կողմի համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում:
3. Կողմերի Համաժողովը, 22-րդ և 26-րդ Հոդվածների համաձայն, քննարկում է զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին, իրենց խնդրանքի համաձայն, սույն Հոդվածին վերաբերվող իրենց պարտավորությունների կատարման գործում օգնություն ցուցաբերելու միջոցները:
4. Սույն Կոնվենցիայի վերաբերյալ զեկույցների ներկայացումն ու տեղեկատվության փոխանակումը իրականացվում է ազգային օրենսդրության համաձայն՝ խորհրդապահության և անձի անձեռնմխելիության ապահովման մասով: Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, ապահովում են իրենց կողմից փոխանակվող ցանկացած խորհրդապահական տեղեկատվության պաշտպանությունը:

### *Հոդված 22*

#### *Գիտա-տեխնիկական և իրավաբանական ոլորտներում համագործակցություն և համապատասխան փորձի տրամադրում*

1. Կողմերը համագործակցում են անմիջականորեն կամ իրավասու միջազգային մարմինների միջոցով՝ զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերի պահանջմունքները հաշվի առնելով սույն Կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարման իրենց ներուժի հզորացման նպատակով: Այդպիսի համագործակցությունը նպատակ ունի աջակցել, փոխադարձ համաձայնությամբ, գիտա-տեխնիկական և իրավաբանական փորձի փախանցմանը՝ ծխախոտի դեմ պայքարի ոլորտում

ազգային ռազմավարությունների, պլանների և ծրագրերի մշակմանն ու հզորացման նպատակով, որոնք, մասնավորապես, ուղղված են հետևյալին.

ա) ծխախոտի դեմ պայքարի հետ կապված տեխնոլոգիաների, գիտելիքների, ունակությունների և փորձի մշակման, փոխանցման և ձեռքբերման աջակցմանը,

բ) գիտա-տեխնիկական, իրաքանական և այլ փորձի տրամադրմանը ծխախոտի դեմ պայքարի ոլորտում ազգային ռազմավարությունների, պլանների և ծրագրերի ստեղծման և հզորացման նպատակով, որոնք ուղղված են Կոմվենցիայի իրականացմանը, մասնավորապես՝ հետևյալի միջոցով.

- համապատասխան խնդրանքով՝ ամուր օրենսդրական հիմքի, ինչպես նաև տեխնիկական ծրագրերի, այդ թվում ծխախոտի օգտագործումը սկսելու կանխարգելման, նրա օգտագործման դադարեցման և ծխախոտի ծխի ազդեցությունից պաշտպանության ծրագրերի ստեղծմանը աջակցման միջոցով,
- համապատասխան դեպքերում, ծխախոտի ոլորտում զբաղված անձանց տնտեսապես և իրավաբանորեն կենսունակ այլընտրանքային ճանապարհների հայթայթման գործում՝ տնտեսապես կենսունակ կերպով միջոցների ապահովման ուղղությամբ աջակցության ցուցաբերմամբ,
- համապատասխան դեպքերում, ծխախոտի աճեցմամբ զբաղված անձանց աջակցությամբ՝ տնտեսապես կենսունակ կերպով անցնելու այլընտրանքային մշակաբույսերի գյուղատնտեսական արտադրությանը,

գ) համապատասխան անձնակազմի նախապատրաստման կամ իրազեկության բարձրացման համապատասխան ծրագրերի աջակցմանը՝ համաձայն 12-րդ Հոդվածի,

դ) համապատասխան դեպքերում՝ ծխախոտի դեմ պայքարի ոլորտում ռազմավարությունների, պլանների և ծրագրերի աջակցման համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների և նյութա-տեխնիկական միջոցների տրամադրմանը,

ե) ծխախոտի դեմ պայքարի, այդ թվում նիկոտինային կախվածությունից բուժման, մեթոդների որոշմանը,

զ) համապատասխան դեպքերում՝ նիկոտինային կախվածությունից համակողմանի բուժման մատչելիության բարձրացմանն ուղղված գիտական հետազոտություններին աջակցմանը:

2. Կողմերի Համաժողովը աջակցում է գիտա-տեխնիկական և իրավաբանական փորձի և տեխնոլոգիաների փոխանցմանը, և այդպիսի փոխանցման դյուրինացմանը 26-րդ Հոդվածի համաձայն ցուցաբերվող ֆինանսական օժանդակությամբ:

## **ՄԱՍ VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

### *Հոդված 23 Կողմերի Համաժողով*

1. Սույնով հիմնվում է Կողմերի Համաժողովը: Համաժողովի առաջին նստաշրջանը հրավիրվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ոչ ուշ քան սույն Կոմվենցիայի ուժի մեջ մտնելուց

մեկ տարի անց: Համաժողովը իր առաջին նստաշրջանում կորոշի հաջորդ հերթական նստաշրջանների տեղն ու ժամանակը:

2. Կողմերի Համաժողովի արտահերթ նստաշրջանները անց են կացվում այլ ժամկետներում, որոնք Համաժողովը կհամարի անհրաժեշտ, կամ ըստ յուրաքանչյուր Կողմի գրավոր պահանջի՝ այն պայմանով, որ այդ պահանջի մասին Կողմերին Քարտուղարության կողմից հաղորդած տեղեկությունը նրանց առնվազն մեկ երրորդի աջակցությունը ստանա վեց ամսվա ընթացքում:

3. Կողմերի Համաժողովը իր առաջին նստաշրջանում իր Ընթացակարգի կանոնները ընդունում է կոնսենսուսով:

4. Կողմերի Համաժողովը կոնսենսուսով ընդունում է իր ֆինանսական և ցանկացած օժանդակող մարմնի ֆինանսավորումը կանոնակարգող այլ կանոններ, որոնք նա կարող է ստեղծել, ինչպես նաև Քարտուղարության գործառնությունը կանոնակարգող ֆինանսական դրույթները: Յուրաքանչյուր հերթական նստաշրջանում, նա հաստատում է հաջորդ հերթական նստաշրջանի ֆինանսական ժամանակաշրջանի բյուջեն:

5. Համաժողովը կանոնավոր կերպով քննարկում է սույն Կոնվենցիայի իրագործումը և նրա արդյունավետ իրագործման աջակցության համար անհրաժեշտ որոշումներ է ընդունում, և կարող է Կոնվենցիայի արձանագրություններ, հավելվածներ և լրացումներ ընդունել ըստ 28, 29 և 33-րդ Հոդվածների: Այս նպատակով նա.

ա) աջակցում և թեթևացնում է տեղեկատվության փոխանակումը ըստ 20 և 21-րդ Հոդվածների,

բ) աջակցում և կարգավորում է սույն Կոնվենցիայի իրագործմանը վերաբերող ի լրումն 20-րդ Հոդվածում նախատեսվածների գիտական հետազոտությունների համադրելի մեթոդաբանությունների և տվյալների հավաքման մշակումը և շարունակական կատարելագործումը,

գ) համապատասխան դեպքերում աջակցում է մարտավարությունների պլանների և ծրագրերի, ինչպես նաև քաղաքականության, օրենսդրության և այլ միջոցների մշակմանը, իրագործմանը և գնահատմանը,

դ) քննարկում է, ըստ սույն Կոնվենցիայի 21-րդ Հոդվածի, Կողմերի ներկայացրած զեկույցները, և հաստատում է Կոնվենցիայի իրագործման մասին կանոնավոր զեկույցներ,

ե) աջակցում և նպաստում է սույն Կոնվենցիայի իրագործման համար ֆինանսական միջոցների մոբիլիզացմանը համաձայն 26-րդ Հոդվածի,

զ) հիմնում է այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի նպատակի իրագործման համար,

(է) համապատասխան դեպքերում դիմում է ծառայություններ մատուցելու և համագործակցության մասին, ինչպես նաև իրավասու և համապատասխան կազմակերպությունների և Միավորված ազգերի կազմակերպության համակարգի մարմինների և այլ միջազգային և տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունների և ոչ կառավարական կազմակերպությունների ու մարմինների կողմից տեղեկատվություն տրամադրելու մասին որպես Կոնվենցիայի իրագործման աշխատանքի զորացման միջոց,

(ը) համապատասխան դեպքերում քննարկում է այլ գործողություններ սույն Կոնվենցիայի նպատակին հասնելու համար նրա իրագործման ընթացքում կուտակված փորձի ներքո:

6. Կողմերի Համաժողովը իր աշխատանքում դիտորդների մասնակցության չափորոշիչներ է սահմանում:

*Հողված 24  
Քարտուղարություն*

1. Կողմերի Համաժողովը մշտական Քարտուղարություն է նշանակում և ապահովում նրա գործառնության պայմանները: Կողմերի Համաժողովը ջանում է դա անել իր առաջին նստաշրջանում:
2. Մինչ մշտական Քարտուղարության նշանակման և հիմնադրման պահը՝ Քարտուղարության գործառնությունները, ըստ սույն Կոնվենցիայի, ապահովում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը:
3. Քարտուղարության գործառնություններն են.
  - ա) Կողմերի Համաժողովի և ցանկացած այլ օժանդակ մարմնի նստաշրջանների կազմակերպումը,
  - բ) համաձայն սույն Կոնվենցիայի՝ իր կողմից ստացված զեկույցների հաղորդումը,
  - գ) Կողմերին, հատկապես զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներ հանդիսացող Կողմերին ըստ իրենց խնդրանքի աջակցություն ցուցաբերումը, ըստ սույն Կոնվենցիայի պահանջվող տեղեկատվության հավաքումը և հաղորդումը,
  - դ) ըստ սույն Կոնվենցիայի՝ Կողմերի Համաժողովի ղեկավարությամբ իր գործունեության մասին զեկույցների պատրաստումը, և դրանց ներկայացումը Կողմերի Համաժողովին,
  - ե) Կողմերի Համաժողովի ղեկավարությամբ՝ իրավասու միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների և այլ մարմինների հետ անհրաժեշտ համակարգման ապահովումը
  - զ) Կողմերի Համաժողովի ղեկավարությամբ՝ այնպիսի վարչական կամ պայմանագրային համաձայնագրերի կնքումը, որոնք կարող են պահանջվել իր գործառնությունների արդյունավետ կատարման համար,
  - է) Կոնվենցիայում և նրան կից յուրաքանչյուր արձանագրությունում նշված Քարտուղարությանը վերաբերող այլ գործառնությունների կատարումը, ինչպես նաև այնպիսի գործառնությունների կատարումը, որոնք կարող են նշված լինել Կողմերի Համաժողովի կողմից:

*Հողված 25*

*Կողմերի Համաժողովի և միջկառավարական կազմակերպությունների հարաբերություններ*

Սույն Կոնվենցիայի նպատակին հասնելու համար, ֆինանսական և տեխնիկական համագործակցության ապահովման նպատակով, Կողմերի Համաժողովը, համագործակցության խնդրանքով, կարող է դիմել իրավասու միջազգային և տարածաշրջանային միջկառավարական կազմակերպություններին, այդ թվում ֆինանսական և զարգացման հարցերով զբաղվող հաստատություններին:

*Հողված 26*

*Ֆինանսական ռեսուրսներ*

1. Կողմերը ճանաչում են սույն Կոնվենցիայի նպատակին հասնելու գործում այն կարևոր դերը, որը խաղում են ֆինանսները:

2. Յուրաքանչյուր Կողմ ֆինանսական աջակցություն է ապահովում սույն Կոնվենցիայի նպատակին հասնելուն ուղղված իր ազգային գործունեությանը՝ ըստ նրա ազգային պլանների, գերակայությունների և ծրագրերի:

3. Կողմերը համապատասխան դեպքերում նպաստում են զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերի ծխախոտի դեմ պայքարի բազմակառույց համակողմանի ծրագրերի մշակմանը և զարգացման ֆինանսավորման ապահովման համար երկկողմ, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և այլ բազմակողմ լծակների օգտագործմանը: Համապատասխանաբար, ազգային մակարդակով մշակված կայուն զարգացման ռազմավարությունների համարտեքստում, հարկ է քննարկել և աջակցել տնտեսապես կենսունակ ծխախոտի այլընտրանքային արտադրությանը՝ ներառյալ մշակաբույսերի դիվերսիֆիկացիան:

4. Կողմերը, որոնք ներկայացված են համապատասխան տարածաշրջանային և միջազգային միջկառավարական կազմակերպություններում, ինչպես նաև ֆինանսական և զարգացման հարցերով զբաղվող հիմնարկներում, խրախուսելով զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին այդ կազմակերպությունների և հիմնարկությունների կողմից ֆինանսական աջակցությանը, նրանց կողմից, համաձայն սույն Կոնվենցիայի՝ իրենց պարտավորությունները կատարելու նպատակով, առանց այդ կազմակերպություններում մասնակցության իրավունքի սահմանափակման:

5. Կողմերը համաձայնում են նրանում, որ.

ա) համաձայն սույն Կոնվենցիայի, Կողմերի՝ իրենց պարտավորությունների կատարմանն ուղղված օգնության ցուցաբերման համար, հատկապես զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացողների, բոլոր համապատասխան ներուժային և առկա ռեսուրսները՝ ծխախոտի դեմ պայքարի միջոցառումների համար հասանելի ֆինանսական, տեխնիկական և այլ, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր, հարկ է մոբիլիզացնել և կիրառել ի շահ բոլոր Կողմերի,

բ) Քարտուղարությունն, առանց Կողմերի խնդրանքի, համաձայն սույն Կոնվենցիայի՝ իրենց պարտավորությունների կատարումը դյուրացնելու համար ֆինանսական առկա աղբյուրների մասին խորհրդատվություն է ցուցաբերում զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին,

գ) Կողմերի Համաժողովն իր առաջին նստաշրջանում Քարտուղարության կողմից անցկացրած հետազոտությունների և այլ, համապատասխան տեղեկատվության հիման վրա կատարում է օգնության առկա և ներուժային աղբյուրների և մեխանիզմների ամփոփում և քննարկում դրանց համապատասխանությունը,

դ) Սույն ամփոփման արդյունքները հաշվի կառնվեն Կողմերի Համաժողովի կողմից առկա մեխանիզմների ամրապնդման անհրաժեշտության կամ կամավոր գլոբալ ֆոնդի, կամ այլ առկա, համապատասխան ֆինանսական մեխանիզմների ստեղծման, զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ հանդիսացող Կողմերին, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ուղղորդման համար՝ նրանց սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու օգնություն ցուցաբերելու համար:

## ՄԱՍ IX. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

*Հոդված 27*

## *Վեճերի կարգավորում*

1. Երկու կամ ավելի Կողմերի միջև սույն Կոնվենցիայի մեկնաբանելու կամ կիրառելու վերաբերյալ վեճի ծագման դեպքում, համապատասխան Կողմերը ձգտում են կարգավորել վեճը դիվանագիտական ճանապարհներով՝ բանակցությունների կամ ցանկացած այլ խաղաղ միջոցների եղանակով, ըստ իրենց ընտրության, ներառյալ բարի ծառայությունները, միջնորդությունը և հաշտությունը: Բարի ծառայությունների, միջնորդության կամ հաշտության միջոցով համաձայնության հասնելու անհնարինության դեպքում՝ հակամարտող կողմերը չեն ազատվում դրա լուծումը որոնելու պարտականությունից:
2. Սույն Կոնվենցիայի վավերացման, ընդունման, պաշտոնական հավանություն տալու, նրան միանալու ընթացքում կամ ցանկացած այլ դեպքում դրանից հետո, որևէ պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն կարող են գրավոր հայտարարել Ավանդապահին, որ նրանք համաձայն են, ըստ սույն Հոդվածի 1-ին Կետի, չլուծվող վեճի վերաբերյալ, որպես հարկադիր միջոց, հատուկ արբիտրաժի անցկացնելը՝ համաձայն ընթացակարգերի, որոնք ենթակա են Կողմերի Համաժողովի ընդունմանը կոնսենսուսի հիման վրա:
3. Սույն Հոդվածի դրույթները կիրառվում են յուրաքանչյուր արձանագրության վերաբերյալ այդ արձանագրության Կողմերի միջև վեճի նկատմամբ, եթե նրանում այլ բան չի նախատեսված:

## **ՄԱՍ X. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԵՏԱԳԱ ՄՇԱԿՈՒՄ**

### *Հոդված 28*

#### *Կոնվենցիայի լրացումներ*

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է սույն Կոնվենցիայի լրացումներ առաջարկել, որոնք կքննարկվեն Կողմերի Համաժողովում:
2. Կոնվենցիայի լրացումներն ընդունում է Կողմերի Համաժողովը: Ցանկացած առաջարկվող լրացման տեքստ Քարտուղարությունը ուղարկում է Կողմերին առնվազն վեց ամիս շուտ մինչև այն նստաշրջանը, որում այդ լրացումը առաջարկվում է ընդունել: Քարտուղարությունը առաջարկվող լրացումներն է ուղարկում նաև Կոնվենցիան ստորագրողներին, և Ավանդապահին՝ ի գիտություն:
3. Կողմերը իրենց բոլոր ջանքերը գործադրում են Կոնվենցիայի յուրաքանչյուր առաջարկված լրացման վերաբերյալ կոնսենսուսի հիման վրա համաձայնության հասնելու համար: Եթե կոնսենսուսի հասնելու բոլոր ջանքերը սպառված են և համաձայնություն ձեռք չի բերված, ապա որպես վերջին միջոց լրացումը ընդունվում է նիստին ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող Կողմերի ձայների երեք քառորդի մեծամասությամբ: Սույն Հոդվածի նպատակների համար, որպես նիստին ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող Կողմեր ենթադրվում են նիստին ներկա գտնվող և «կողմ» կամ «դեմ» քվեարկող Կողմերը: Յուրաքանչյուր ընդունված լրացում Քարտուղարությունը հասցեագրում է Ավանդապահին, որը, ընդունելու համար, այն ուղարկում է բոլոր Կողմերին:

4. Լրացման ընդունման մասին փաստաթղթերը հանձնվում են Ավանդապահին՝ ի պահ: Համաձայն սույն Հոդվածի 3-րդ Կետի՝ ընդունված լրացումը ուժի մեջ է մտնում այդ լրացումն ընդունած Կողմերի համար սույն Կոնվենցիայի Կողմերի առնվազն երկու երրորդով ընդունման մասին փաստաթղթի Ավանդապահի ստանալու ամսաթվից հետո իննսուներորդ օրը:

5. Լրացումը ուժի մեջ է մտնում ցանկացած այլ Կողմի համար իննսուներորդ օրը տվյալ Կողմից նշված լրացման ընդունման մասին իր փաստաթուղթն Ավանդապահին ի պահ հանձնելու ամսաթվից հետո:

#### *Հոդված 29*

##### *Կոնվենցիայի հավելվածների ընդունումը և նրանց մեջ լրացումներ մտցնելը*

1. Սույն Կոնվենցիաների հավելվածները և դրանց լրացումները առաջարկվում, ընդունվում և ուժի մեջ են մտնում համաձայն 28-րդ Հոդվածում սահմանված ընթացակարգի:

2. Սույն Կոնվենցիայի հավելվածները կազմում են նրա անքակտելի մաս և, եթե, այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ, ապա հղումը Կոնվենցիային միևնույն ժամանակ հանդիսանում է հղում նրա յուրաքանչյուր լրացմանը:

3. Լրացումները սահմանափակվում են ընթացակարգային, գիտական, տեխնիկական կամ վարչական հարցերին վերաբերվող ցուցակներով, ձևերով և յուրաքանչյուր այլ նկարագրական նյութով:

#### **ՍԱՍ XI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒԹՆԵՐ**

#### *Հոդված 30*

##### *Վերապահումներ*

Սույն Կոնվենցիայի վերաբերյալ ոչ մի վերապահում չի թույլատրվում:

#### *Հոդված 31*

##### *Դուրս գալը*

1. Որևէ Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվից երկու տարի անց ցանկացած ժամանակ այդ Կողմը կարող է դուրս գալ Կոնվենցիայից, Ավանդապահին հղելով գրավոր ծանուցում:

2. Դուրս գալու ցանկացած գործընթաց ուժի մեջ է մտնում դուրս գալու մասին ծանուցումը Ավանդապահի ստանալու ամսաթվից հետո մեկ տարվա ժամանակահատվածի սպառվելուց հետո, կամ ավելի ուշ, որ ամսաթիվը կարող է նշված լինել դուրս գալու մասին ծանուցման մեջ:

3. Սույն Կոնվենցիայից դուրս եկող յուրաքանչյուր Կողմ համարվում է յուրաքանչյուր արձանագրությունից ևս դուրս եկած, որի Կողմն է նա:

#### *Հոդված 32*

##### *Չայնի իրավունք*

1. Սույն Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն, բացառությամբ սույն Հոդվածի 2-րդ կետում նախատեսված դեպքի:
2. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունները իրենց իրավասությունների մեջ մտնող հարցերում օգտագործում են իրենց ձայնի իրավունքը՝ ունենալով ձայների այն թիվը, որը հավասար է սույն Կոնվենցիայի անդամ հանդիսացող պետությունների քանակին: Նման կազմակերպությունը չի օգտագործում իր ձայնի իրավունքը, եթե իր անդամ պետություններից որևէ մեկը օգտագործում է իր իրավունքը, և՛ հակառակը:

### *Հոդված 33*

#### *Արձանագրություններ*

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է առաջարկել արձանագրություններ: Այդպիսի առաջարկությունները քննարկում է Կողմերի Համաժողովը:
2. Կողմերի Համաժողովը կարող է ընդունել Կոնվենցիային կից արձանագրություններ: Այդ արձանագրությունների ընդունման ընթացքում գործադրվում են բոլոր ջանքերը կոնսենսուսի հասնելու համար: Եթե կոնսենսուսի հասնելու ճանապարհին բոլոր ջանքերը սպառվել են, իսկ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա որպես վերջին միջոց՝ արձանագրությունն ընդունվում է Կողմերի նիստին ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող ձայների երեք քառորդի մեծամասնությամբ: Սույն Հոդվածի նպատակների համար, նիստին ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող Կողմերի տակ ենթադրվում են նիստին ներկա գտնվող և «կողմ» կամ «դեմ» քվեարկող Կողմերը:
3. Ցանկացած առաջարկված արձանագրության տեքստը Քարտուղարության կողմից ուղարկվում է Կողմերին ոչ ուշ քան վեց ամիս նստաշրջանից առաջ, որի ընթացքում առաջարկվում է վերջինիս ընդունումը:
4. Արձանագրության Կողմեր կարող են լինել միայն սույն Կոնվենցիայի Կողմերը:
5. Սույն Կոնվենցիային կից յուրաքանչյուր արձանագրություն պարտադիր է միայն համապատասխան արձանագրության Կողմերի համար: Որևէ արձանագրության բացառապես վերաբերող հարցերի առնչությամբ որոշումները ընդունում են միայն տվյալ արձանագրության Կողմերը:
6. Յուրաքանչյուր արձանագրության ուժի մեջ մտնելու պայմանները հաստատում են այդ արձանագրությունով:

### *Հոդված 34*

#### *Ստորագրում*

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրության Առողջապահության համաշխարհային կազմակերպության անդամ բոլոր պետությունների համար և վանկացած պետության համար, որը Առողջապահության համաշխարհային կազմակերպության անդամ չէ, բայց Միավորված ազգերի կազմակերպության անդամ է, ինչպես նաև տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների համար՝ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության գլխավոր գրասենյակում, Ժնևում, 2003 թվականի հունիսի 16-22-ը, իսկ այնուհետև՝ Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր

գրասենյակում, Նյու-Յորքում, 2003 թվականի հունիսի 30-ից 2004 թվականի հունիսի 29-ը:

### *Հոդված 35*

*Վավերացումը, ընդունումը, հաստատումը, պաշտոնական հավանություն տալը կամ միանալը*

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու պետությունների կողմից, ինչպես նաև պաշտոնական հավանություն տալու կամ միանալու՝ տնտեսական ինտեգրման կազմակերպությունների կողմից: Այն բացվում է միանալու համար Կոնվենցիայի ստորագրման համար փակվելու ամսաթվի հաջորդ օրը: Վավերացման, ընդունման, հաստատման, պաշտոնական հավանություն տալու կամ միանալու մասին փաստաթուղթը հանձնվում է Ավանդապահին՝ ի պահ:
2. Սույն Կոնվենցիային Կողմ դարձող ցանկացած տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն, որը, այն դեպքերում, երբ իր անդամ-պետություններից ոչ մեկը Կողմ չի հանդիսանում, կրում է Կոնվենցիայից բխող բոլոր պարտավորությունները: Այն դեպքում, երբ մեկ կամ ավելի նման կազմակերպությունների անդամ պետությունները Կոնվենցիայի Կողմեր են, այդ կազմակերպությունը և նրա անդամ պետությունները որոշում են ընդունում, ըստ Կոնվենցիայի, իրենց համապատասխան պարտավորությունների կատարման վերաբերյալ: Այդպիսի դեպքերում կազմակերպությունը և անդամ-պետությունները չեն կարող զուգահեռաբար իրականացնել Կոնվենցիայից բխող իրավունքները:
3. Պաշտոնական հավանություն տալու կամ միանալու մասին իրենց փաստաթղթերում տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունները հայտարարում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերում իրենց իրավասության շրջանակների մասին: Այս կազմակերպությունները նաև տեղեկացնում են Ավանդապահին, որն, իր հերթին, տեղեկացնում է Կողմերին իրենց իրավասությունների ցանկացած էական փոփոխության մասին:

### *Հոդված 36*

*Ուժի մեջ մտնելը*

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման, պաշտոնական հավանություն տալու կամ միանալու մասին քառասուներորդ փաստաթղթի Ավանդապահին ի պահ հանձնման ամսաթվից հետո իննսուներորդ օրը:
2. Սույն Կոնվենցիան վավերացնող, ընդունող կամ հաստատող կամ ուժի մեջ մտնելու մասին սույն Հոդվածի 1-ին կետում շարադրած պայմանները կատարելուց հետո նրան միացող յուրաքանչյուր պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման, կամ միանալու մասին քառասուներորդ փաստաթղթի Ավանդապահին ի պահ հանձնման ամսաթվից հետո իննսուներորդ օրը:
3. Յուրաքանչյուր տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության համար, որը ի պահ է հանձնում պաշտոնական

հավանություն տալու մասին փաստաթուղթ կամ միանալու մասին փաստաթուղթ ուժի մեջ մտնելու մասին սույն Հոդվածի 1-ին կետում շարադրած պայմանները կատարելուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր կողմից պաշտոնական համանության կամ միանալու փաստաթղթի հանձնման ամսաթվից հետո իննսուներորդ օրը:

4. Սույն Հոդվածի նպատակների համար ցանկացած փաստաթուղթ, ի պահ հանձնած տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից, չի համարվում հավելյալ այն փաստաթղթերին, որոնք ի պահ են հանձնել այդ կազմակերպության անդամ պետությունները :

#### *Հոդված 37*

##### *Ավանդապահ*

Սույն Կոնվենցիայի և նրա լրացումների, ինչպես նաև 28, 29 և 33-րդ Հոդվածների համաձայն ընդունված արձանագրությունների և հավելվածների, ավանդապահ է հանդիսանում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

#### *Հոդված 38*

##### *Նույնական տեքստեր*

Սույն Կոնվենցիայի բնագիրը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չիներեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հանդիսանում են հավասարապես նույնական, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄ ՈՐԻ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Ժնևում երկու հազար երեք թվականի [ամսաթիվ, ամիս]:

Չորրորդ լիազումար նիստ, 21 մարտի 2003 թ.  
A/56/VR/4